ՀՀ ՆԳՆ ֆինանսաբյուջետային վարչության պետ

Վարդան Պետրոսյանին

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀՀ ներքին գործերի նախարարության ֆինանսաբյուջետային վարչության փորձագետ

Աննիկ Գրիշայի Սավզյանի կողից 2024 թվականի 4-րդ եռամսյակում

կատարած աշխատանքների վերաբերյալ

2024թ. 4-րդ եռամսյակի ընթացքում իմ կողմից ք.Երևան Արովյան 54 աշխատավայրում կատարվել են հետևյալ աշխատանքները:

1. Կազմել եմ ՀՀ ՆԳՆ ոստիկանության բժշկական վարչության 2024թ. 4-րդ եռամսյակի ծախսերի նախահաշիվների կատարման հաշվեկշռի հաշվետվությունը, նաև դեղորայքի և վիրակապական նյութերի , սոցիալական փաթեթի, կոմունալ ծախսերի, աշխասակիցների թվաքանակի և դրամական բավարարման, դեբիտորական և կրեդիտորական պարտքերի և պահեստավորված միջոցների, հիմնական միջոցների, նյութական արժեքների շարժի վերաբերյալ հաշվետվությունները , ներկայացրել ՀՀ ՆԳՆ ֆինանսաբյուջետային վարչություն:

2. Ընդունել եմ բժշկական վարչության աշխատողների հոկտեմբեր,նոյեմբեր,դեկտեմբեր ամիսների աշխատաժամանակի հաշվարկի տեղեկագրերը, կատարել աշխատավարձերի, պարգևատրումների, բնակարանների վարձակալության դիմաց վճարվող դրամական փոխհատուցումների հաշվարկները, կազմել համապատասխան վճարման ցուցակներ:

3. Կատարված հաշվարկների հիման վրա կազմել եմ բյուջետային ֆինանսավորման հայտ-պահանջագրեր:

4. Ներկայացված հայտ պահանջագրերով բացված ֆինանսավորումների հիման վրա կատարել եմ փոխանցումները:Բժշկական վարչության հաշվից կատարել եմ աշխատավարձի, բնակարանների վարձակալության դիմաց վճարվող դրամական փոխանցումների, սոցիալական վճարի, եկամտային հարկի, դեղորայքի, բժշկական սարքավորումների վերանորոգման, առողջարանային ուղեգրերի ձեռք բերման և այլ վճարումները:

5. Վարել եմ աշխատակիցների աշխատավարձերի հաշվարկման անհատական քարտերը, անհրաժեշտության դեպքում տրամադրել միջին ամսական աշխատավարձի վերաբերյալ տեղեկանքներ, ծառայողական տեղափոխումների և ծառայությունից արձակվելու դեպքում կազմել դրամական վարձատրության վկայականներ, կատարել վերջնահաշվարկ:

6. Սահմանված ժամկետում կազմել և էլեկտրոնային եղանակով հարկային մարմին եմ ներկայացրել եկամտային հարկի և սոցիալական վճարի 2024թ. հոկտեմբեր,նոյեմբեր, դեկտեմբեր ամիսների ամփոփ հաշվարկները:

7. Կատարել եմ հիմնական միջոցների և ապրանքանյութական արժեքների գրանցման և հաշվառման աշխատանքները:

8. Կազմակերպել եմ առողջարանային ուղեգրերի ձեռք բերման աշխատանքները, ուղեգրերի իրականացման կարգը սահմանված է ՀՀ կառավարության 20.07.2001թ. թիվ 553 որոշմամբ: Համաձայն կարգի ՀՀ ՆԳՆ ծառայողներին հատկացվել է 70 ուղեգիր:

9. Կազմակերպել եմ բժշկական վարչության հիմնական միջոցների դուրսգրման աշխատանքները , հիմք ընդունելով ՀՀ ՆԳ Նախարարի 24.06.2024 թվականի թիվ 2820-Ա հրամանը:

10. Համաձայն ՀՀ ՆԳՆ բժշկական վարչության պետի 18.10.2024թ. թիվ 70-Ա հրամանի կատարվել է 2024թ. ԲՎ ակտիվների և պարտավորությունների պարտադիր տարեկան գույքագրումը:

11. Կատարել եմ ՀՀ ՆԳՆ ֆինանսաբյուջետային վարչության կողմից ստացված հանձնարարականները, շրջաբերականների պահանջները, հետևել ցուցումներին, պարզաբանումներին, Նորմատիվ իրավական ակտերի փոփոխություններին:

ՀՀ ՆԳՆ ֆինանսաբյուջետային վարչության փորձագետ Ա.Սավզյան

«27» դեկտեմբեր 2024թիվ

Հաշվետու ժամանակահատվածում կատարված աշխատանքները գնահատում եմ

ՀՀ ՆԳՆ ֆինանսաբյուջետային վարչության պետ Վարդան Պետրոսյան

«30» դեկտեմբեր 2024թիվ